ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ԿՅԱՆՔԵՐ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԵԹԵ ԴՈՒՔ ԿԱՄ ՁԵՐ ՍԻՐԵԼԻՆ ԳՏՆՎՈՒՄ ԵՔ ԽԻՍՏ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ և ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ ԿԱՄ ԱՅԼՈՑ ՎՆԱՍԵԼՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ, ԱՊԱ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 911:

Այս փաստաթուղթն ընդհանուր ամփոփ տեղեկատվություն է տրամադրում1 հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքներ ներկայացնելու համար: Դիմումի գործընթացի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության համար օգտվեք https://tinyurl.com/californiacourts կայքէջից: Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքների համար պահանջ ներկայացնելն անվճար է, իսկ ձևաթղթերը հասանելի են այստեղ՝ https://tinyurl.com/californiacourts , իսկ ձեր տեղական Գերագույն դատարանը, որը գուցե ունենա ինքնօգնության կենտրոն՝ լրացուցիչ ուղղորդում տրամադրելու նպատակով:

Սկսելու համար՝ նախ սահմանեք, թե արդյոք դուք «իրավասու խնդրարկու» եք: Սրանք այն կալիֆոռնիացիներն են, ովքեր իրավականորեն համապատասխանում են, որպեսզի պահանջ ներկայացնեն հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի համար: Իրավասու խնդրարկուները ներառում են մարդկանց հետևյալ կատեգորիաները, ովքեր բարեկամական հարաբերություն ունեն կամ մտերիմ են հրազենի սեփականտիրոջ հետ, ով կարող է վնասել ինքն իրեն կամ այլոց՝

Ընտանիքի անդամ և սիրելի անձնավորություն՝ ըստ արյունակցական կապի, ամուսնության կամ որդեգրման:

Ցանկացած անձ, ով ներկայիս տնային տնտեսության անդամ/սենյակակից է

Գործընկեր

Անհատ, ով ընդհանուր երեխա ունի կամ ժամադրվում է ճգնաժամում հայտնված անձի հետ

Իրավապահ մարմիններ, այդ թվում Կալիֆոռնիայի խաղաղապահները

Միջին, ավագ դպրոցի, քոլեջի կամ համալսարանի ուսուցիչ կամ աշխատակից

Եթե ինքներդ նպատակահարմար չեք զգում հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի պահանջ ներկայացնելու համար կամ չեք համապատասխանում որպես իրավասու խնդրարկու, կարող եք տեղեկացնել իրավապահ մարմիններին, որ մտահոգված եք որևէ մեկի համար, ով կարող է վնասել ինքն իրեն կամ այլոց: Իրավապահ աշխատակիցը կարող է հետաքննել և միջնորդություն ներկայացնել կամ ձեռք բերել անհապաղ, արտակարգ իրավիճակին բնորոշ հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելք, եթե նա պարզի, որ առկա են դրա հիմքերը:

ՔԱՅԼ 1՝
ԼՐԱՑՆԵԼ ՁԵՐ ԴԱՏԱԿԱՆ ԹՂԹԵՐԸ և ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Առկա է հինգ ձևաթուղթ, որոնք պետք է լրացվեն հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի պահանջ ներկայացնելու համար: Դրանք կարող եք գտնել ձեր **տեղական Գերագույն դատարանում** կամ առցանց՝ **https://tinyurl.com/californiacourts**:
- Համոզվեք, որ ներառել եք հետևյալը՝
  - Ինչու եք խնդրում տվյալ արգելքը
  - Ինչու եք կարծում, որ տվյալ անձն ինքն իրեն կամ այլոց վնասելու ռիսկի տակ է
  - Անհատի հետ փոխազդեցությունները
  - Միջամտության և կանխարգելման մեթոդների այլ ձևերը, որոնք փորձել եք, սակայն անօգուտ

ԿԱՐԵՎՈՐ Է՝ Խնդրարկուներն իրենց թղթերում չպետք է ներառեն իրենց անձնական հասցեն: Օգտագործեք առանձին փոստային հասցե, եթե չեք ցանկանում, որ ճգնաժամում հայտնված անձն այն տեսնի:

Ստուգեք, թե արդյոք ձեր տեղական Գերագույն դատարանի ինքնօգնության կենտրոնն աջակցում է հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի գործընթացին. այն կարող է վերանայել ձեր փաստաթղթերը նախքան շարունակելը: Անվճար իրավական աջակցությունը նաև հասանելի է այստեղ՝ **CalBar.ca.gov**.

Այս գործընթացին ձեզ հարկավոր է բոլոր ձևաթղթերի առնվազն երեք (3) պատճենը. մեկը ձեզ համար, մեկը ճգնաժամում հայտնված անձի համար և մեկ բնօրինակ պատճենը դատարանի համար:

ՔԱՅԼ 2՝
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՁԵՐ ԴԱՏԱԿԱՆ ԹՂԹԵՐԸ ԳՈՐԾԱՎԱՐԻՆ

- Երբ լրացնեք ձեր բոլոր ձևաթղթերը, տարեք դրանք ձեր **տեղական Գերագույն դատարան**, որպեսզի արգելքի համար ներկայացնեք պահանջը: Պահանջը պետք է անձամբ ներկայացնեք:
  - Ներկայացրեք այն վարչաշրջանում, որտեղ ապրում է ճգնաժամում հայտնված անձը կամ որտեղ տեղի են ունեցել սպառնալիքներ կամ վնասվածքներ:
  - Գործավարի գրասենյակը կարող եք գտնել այստեղ՝ **https://tinyurl.com/findmycourt**
  - Ներկայացնելու համար վճար չկա:

ՔԱՅԼ 3՝
ԵՏ ՍՏԱՆԱԼ ՁԵՐ ԹՂԹԵՐԸ ԳՈՐԾԱՎԱՐԻՑ

- Ձեր դատական փաստաթղթերը ներկայացնելուց հետո դատավորը կվերանայի դրանք:
  - Դուք պետք է վերցնեք ձեր դատական փաստաթղթերը դրանք վերանայվելուց հետո:
- Եթե դատավորը ստորագրում է ձևաթուղթը, դա նշանակում է, որ դուք ունեք հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելք, որն ուժի մեջ է 21 օր շարունակ:
  - Եթե ձեզ անհրաժեշտ է երկարաձգել արգելքը, դուք պետք է ներկայանաք դատավորի կողմից նշանակված դատական օրը՝ քննարկելու 1-ից 5 տարի տևողությամբ արգելք արձակելու հարցը:
- Եթե նախքան ձեր դատական նիստի օրը դատավորը հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելք չտրամադրի, ապա դատավորը դեռ կարող է խափանման միջոց կիրառել դատական նիստի ժամանակ: Դուք պետք է ներկայանաք ձեր դատական նիստի օրը, որպեսզի դատավորն ավելի երկար խափանման միջոց կիրառի:

ՔԱՅԼ 4՝
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԸ ԿԻՐԱՌՎԻ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ

- Դատավորի կողմից հաստատվելու դեպքում՝ դուք պետք է խնդրեք, որ ինչ-որ մեկը ճգնաժամում հայտնված անձին փոխանցի ժամանակավոր արգելքի պատճենը: Ձեզ չի թույլատրվում փոխանցել արգելքը:
- Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի փոխանցումը կարող է վտանգավոր լինել: Խորհուրդ է տրվում, որ իրավապահ մարմնի աշխատակիցը, օրինակ՝ Կալիֆոռնիայի ոստիկանական աշխատակիցը, դա անի:
  - Աշխատակիցը ժամանակավորապես կբռնագանձի անձի բոլոր ատրճանակները, պահեստատուփերը և զինամթերքը դատարանի փաստաթղթերը փոխանցելիս:
  - Իրավականորեն անձն ի վիճակի չի լինի գնել որևէ հրազեն, զինամթերք կամ պահեստատուփ, քանի դեռ արգելքն ուժի մեջ է:

ՔԱՅԼ 5՝
ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՁԵՐ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ

- 21 օր հետո, եթե կարողանաք երկարաձգել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը 1-ից 5 տարով, կամ եթե սկզբում մերժվել է արգելքը, ապա դատական նիստում կարող եք ակնկալել հետևյալը՝
  - Դատավորը կխնդրի ձեզ և ճգնաժամում հայտնված անձին նշել ձեր անունները:
  - Դատավորը կլսի երկու կողմերին էլ:
    - Ունեցեք փաստեր և վկաներ, ովքեր պատրաստ են վկայություն տալ:
  - Դատավորը որոշում է, թե արդյոք կկիրառի արգելքը, թե կմերժի:

ՔԱՅԼ 6՝
ՁԵՐ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻՑ ՀԵՏՈ

- Եթե դատավորի կողմից հաստատվում է 1-ից 5 տարի ժամկետով հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը, լրացրեք **GV-130** ձևաթուղթը, ներկայացրեք այն դատարան և կազմակերպեք դատական փաստաթղթերի փոխանցումը ճգնաժամում գտնվող անձին:
- Եթե դատավորը տալիս է ձեզ դատական նիստի նոր ամսաթիվ, անպայման ներկայացեք այդ ամսաթվին, որպեսզի շարունակեք պահանջել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը:
- Եթե դատավորը ՉԻ հաստատում ձեր պահանջը, ավելի շատ ռեսուրսներ առկա են այստեղ՝ **https://tinyurl.com/afterhearing** օրինակ՝
  - Զանգահարեք 211 տեղական սոցիալական ծառայության ռեսուրսների համար:
  - Զանգահարեք 988 ինքնասպանությունների կանխարգելման ազգային հեռախոսագծով:
  - Զանգահարեք 1-800-799-7233 ընտանեկան բռնության ազգային հեռախոսագծով:
  - Կապվեք տեղական իրավապահ մարմինների հետ, եթե շարունակում եք վախենալ, որ տվյալ անձը կարող է վնասել ինքն իրեն կամ այլոց:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱՑՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

- Եթե նախնական արգելքի վերջում դուք դեռ մտահոգված եք և ցանկանում եք, որ հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը մնա, դուք պետք է խնդրեք դատարանին «նորացնել» այն, որը կարող է պահպանել արգելքը ևս 1-5 տարի ժամկետով: Նորացում խնդրելու համար դուք պետք է լրացնեք երկու դատական ձևաթուղթ՝ **GV-700** և **GV-710** ձեր GV-130-ի պատճենի հետ միասին:

- Մանրամասն քայլերի գործընթացը և բոլոր ձևաթղթերի հղումները կարելի է գտնել այստեղ՝ **https://www.courts.ca.gov/33681.htm**

- Երբ հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի ժամկետը լրանա, արգելք ստացած անձը կարող է դիմել դատարաններ՝ ցանկության դեպքում նորից իր հրազենը ետ ստանալու համար: Այս գործընթացի մանրամասները կարելի է գտնել այստեղ՝ **https://tinyurl.com/afterGVRO**

Անհրաժեշտ փաստաթղթերը գտնելու և/կամ գործընթացի ամեն քայլի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք այցելել Կալիֆոռնիայի դատարանների կայքէջ՝ **https://tinyurl.com/californiacourts**: